

77

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՐԱՍ ԱՏՈՍԻ

ՔԵՄԱԼԱԿԱՆ ԳԱՐԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՅԱՔՈՒՓ ՔԱԴՐԻ  
ՔԱՐԱԾՍՄԱՆՕՂՆՈՒԻ ԱՐՁԱԿՈՒՄ

ժ. 01. 07 - «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ՀՀ ՔԱՎ ԲՉԹԱՆԿԻԿ ԱՆՆՅԱՆ, պրոֆ.  
Ք. Սաֆրասարյանին հեղինակի կողմից՝  
հարցաձևով և նրախոսքիցությամբ

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԻԼԵՆԻ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր

**ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀԱՄԱԻԿ ԱՎԵՏԻՍԻ**

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՏՈՆԻԿՅԱՆ ՍՈՆԱ ԱԼԲԵՐՏԻ**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2011 թ. հուլիսի 18-ին՝ ժամը 12<sup>00</sup>-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Արվյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011թ. հունիսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

1920-ական թվականներին նախկին Օսմանյան կայսրության տարածքների մի մասում «արևմտյան մոդելով» ստեղծված Թուրքիայի Հանրապետությունը Մերձավոր ու Միջին Արևելքում առաջին ազգայնական պետություններից մեկն էր, որին բնորոշ էր թուրքական միատարրությանը նպատակաուղղված հասարակության ազգայնականացումը: Քեմալական գաղափարախոսությունը, որը դարձավ այս նորաստեղծ պետության քաղաքականության հիմքը, իր արտացոլումը գտավ նաև թուրք գրականության մեջ: 1920-30-ական թթ. հանրապետական վաղ շրջանի գրականության մեջ գերակայում էր թուրքական նոր պետականության հիմնադիր Մուսթաֆա Քեմալի գաղափարները գեղարվեստական արտահայտչամիջոցներով քարոզելու խնդիրը: Որպես քեմալականության գաղափարախոսության ջատագով թուրք գրականության մեջ հատկապես առանձնանում է Յաքուփ Քադրի Քարասոսմանօղլուն (1889-1974), որի գրական գործունեության քննությանն էլ նվիրված է սույն ատենախոսությունը: Նա 20-րդ դարի թուրք գրականության խոշորագույն դեմքերից է՝ արձակագիր, հրապարակախոս, մենագրությունների ու հուշագրությունների հեղինակ և այն մարդկանցից, ով ամնիջականորեն կանգնած էր քեմալական շարժման կիզակետում ու համարվում էր Մուսթաֆա Քեմալ-Աթաթուրքի մերձավոր զինակիցը:

Սույն ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ Յաքուփ Քադրի Քարասոսմանօղլուն այն գրողներից է, ում ստեղծագործության շրջանակն ընդգրկում է թանգիմաթից մինչև հանրապետական Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունները, հասնում մինչև 20-րդ դարի 50-60-ական թվականները: Ատենախոսության մեջ Յաքուփ Քադրիի արձակի քննության միջոցով փորձել ենք բացահայտել նաև 19-րդ դարի վերջի, 20-րդ դարի սկզբի ու քեմալական Թուրքիայի «ազգային» գրականության միտումները, գաղափարաքաղաքական ու բարոյահոգեբանական շեշտադրումները, զարգացման ընթացքը: Քադրիին նաև այն թուրք գրողներից է, ով փորձել է առավել համակողմանիորեն ներկայացնել փոքրասիական գավառը:

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հայ իրականության մեջ դեռևս բավարար չափով հետազոտված չեն 19-րդ դարի վերջի և 20- դարի սկզբի թուրք գրական կյանքի զարգացման առանձնահատկությունները: Գրեթե լուսաբանված չէ քեմալական գաղափարախոսության ազդեցությունը թուրք «ազգային» գրականության վրա: Սույն ատենախոսությունը մեր իրականության մեջ Յաքուփ Քադրի Քարասոսմանօղլուի արձակի, նրանում քեմալական գաղափարախոսության արտացոլման և 20-30-ական թթ.

թուրք ազգայնական գրականության գաղափարաբաղաբական ընկալումների համակողմանի լուսաբանմանը նվիրված առաջին աշխատանքն է: Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ թեև իսլամամետ թեքում ունեցող քաղաքական ուժերի ճնշման տակ ժամանակակից թուրքիայի Հանրապետությունում քեմալական ավանդույթների որոշակի ձևափոխման փորձեր են կատարվում, ներկայումս էլ քեմալականությունն այդ երկրում պաշտոնապես իշխող գաղափարախոսությունն է, ինչն ամրագրված է օրենսդրությամբ: Մենք փորձել ենք պատմական հենքի վրա քննել քեմալական գաղափարախոսության արտացոլումը թուրք գեղարվեստական գրականության մեջ՝ ցույց տալով պետության պահանջարկով «Մոր թուրքի» ձևավորման գործընթացը:

Ատենախոսության եզրահանգումները կարող են օգտագործվել ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնում ստեղծվող «Թուրք գրականության բուհական դասագրքի» և համապատասխան ձեռնարկների կազմման աշխատանքներում:

#### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր ուսումնասիրության առարկան Յաքուփ Քադրի Քարասումանօղլուի արձակ ստեղծագործություններում և հրապարակախոսության մեջ քեմալական գաղափարախոսության արտացոլման հնապավորինս համակողմանի քննությունն է: Միաժամանակ փորձել ենք գրական փաստերի և քաղաքական իրադարձությունների համադրումով վերլուծել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի, ինչպես նաև քեմալական շրջանի թուրք գրականության պատմական զարգացման, գաղափարական ու գեղարվեստական առանձին օրինաչափությունները, ժամանակի թուրքական հասարակական-քաղաքական, մշակութային հոսանքների դիրքորոշումները և դրանց ազդեցությունը գրական գործընթացի վրա:

Ատենախոսության նպատակն է ցույց տալ Յաքուփ Քադրի Քարասումանօղլուի գրական կայացման ընթացքը և ազդեցությունները, թուրքական արձակում նրա նորամուծությունները, հեղինակի ստեղծագործության թեմատիկ, ժանրային ու գաղափարական առանձնահատկությունները, կիրառած գրական-գեղարվեստական հնարանքները, ինչպես նաև բացահայտել 1920-30-ական թթ. Թուրքիայի քաղաքական համակարգի ազդեցությունը ազգայնական գրականության ձևավորման վրա:

Ատենախոսության մեջ խնդիր է դրվել վերլուծել 1920-30-ական թթ. թուրք գրականության ու մասնավորապես Յաքուփ Քադրի Քարասումանօղլուի ստեղծագործության մեջ կոնկրետ Մուսթաֆա Քեմալի Աթաթուրքի կերպարի գեղարվեստականացումը, բացահայտել քաղաքական գաղափարների դրսևորումները:

#### ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Յաքուփ Քադրի Քարասումանօղլուի արձակի վերլուծության համար հիմնական աղբյուր են ծառայել հեղինակի ստեղծագործությունների բնագրերը՝ «Ծերունի Նուրը» («Nur Baba», 1923), «Վարձու բնակարան» («Kiralik Konak», 1923), «Վճռական գիշեր» («Hüküm Gecesi», 1927), «Պատմվածքներ ազգային պայքարի մասին» (Millî Savaş Hikayeleri, 1922), «Սողոմ Գոմոր» («Sodom ve Gomore», 1928), «Աքսոր» («Bir Sürgün», 1937) վեպերը, «Դիվանագետը կամքին հակառակ» («Zoraki Diplomat») վեպ-հուշագրությունը: Առավել համազամանակից քննության ենք ենթարկել հեղինակի «Օտարը» («Yaban», 1932) և «Անկարա» («Ankara», 1947) վեպերը:

Ատենախոսության մեջ օգտավորվել են նաև թուրքերեն, հայերեն, ռուսերեն, անգլերեն մենագրություններ ու գիտական հոդվածներ՝ թուրք գրականության գաղափարական, թեմատիկ, ժանրային առանձնահատկություններին, հատկապես Յաքուփ Քադրի Քարասումանօղլուի գրական գործունեության, հանրապետական Թուրքիայի հասարակական և քաղաքական գործընթացների մասին, որոնք լույս են տեսել թուրքիայում, Եվրոպայում, նախկին խորհրդային Միությունում, Հայաստանում: Գրականագետներն ավանդաբար թանգիմաթյան և հանրապետական շրջանի թուրք գրականությունն ուսումնասիրելիս վերհանել են նրա աղերսները հասարակական-քաղաքական իրադարձությունների հետ, քանզի ժամանակի թուրք գրողները հաճախ հենց թուրքական ազգայնական գաղափարախոսության մշակողներն ու կրողներն էին: Խորհրդային ուսումնասիրողները, ցավոք, շատ երևույթներ բնութագրել են՝ առաջնորդվելով բացառապես խորհրդա-թուրքական մերձեցման «տրամաբանությամբ»: «Դասակարգային մոտեցումը» և «հեղափոխական Արևելքի» տեսլականը խորհրդային թուրքագետ-գրականագետներին հաճախ հանգեցրել է ակնհայտորեն ոչ իրատեսական եզրահանգումների, նրանք քեմալական ժամանակաշրջանի գրականության իրողությունները հիմնականում ներկայացրել են ծուռ հայելու մեջ: Այսպես, օրինակ՝ քեմալական շարժումը բնորոշվել որպես «ազգային-ազատագրական պայքար», ավելին՝ այն երբեմն բնութագրվում էր իբրև բանվորագյուղացիական արդար հեղափոխություն՝ ուղղված գաղութարարների դեմ: Ռ. Ֆիշը հետևյալ կերպ է սահմանում քեմալական շարժումը. «Հոկտեմբերյան հեղափոխությունն արմատապես փոխեց մեր երկրների հարաբերությունները: Այն մարդկության միասնության զգացողության հիմքը դրեց, արթնացրեց Արևելքը, որի ազատագրումը կարող է իրականանալ մեր աչքերի առջև: Թուրքիան պայքարում էր Անտանտի այն տասնչորս պետությունների դեմ, որոնց դեմ պայքարում էր նաև խորհրդային Ռուսաստանը: Այն դարձավ Արևելքի առաջին պետությունը, ուր հաղթեց ազգային-

ազատագրական շարժումը»<sup>1</sup>: Համաձայն գրականագետ Լ. Ալկակայի «թուրքական բուրժուական հեղափոխության գլխավոր բովանդակությունն ազգային-ազատագրական պատերազմն էր»<sup>2</sup>: Նա գրում է նաև, որ «թուրք ժողովուրդը զենքը ձեռքին ոտքի էր կանգնել պաշտպանելու իր անկախությունը, որին աջակցում էր աշխարհի առաջին բանվորագյուղացիական պետությունը: ... Եվ այդ հեղափոխության շարժիչ ուժը թուրքական բանվորներն ու գյուղացիներն էին»<sup>3</sup>: Քենալական շարժման համար ազգային-ազատագրական եզրի կիրառումը միանգամայն անընդունելի է մեզ համար, քանզի չպետք է մոռանալ, որ այս շարժման հիմնական ուժը նախկին երիտթուրքերն էին: Թեև շարժմանը մասնակցել են նաև բանվորներ ու գյուղացիներ, այն «դասական մարքսիստական» ըմբռնմամբ էլ, անշուշտ, բանվորագյուղացիական հեղափոխության բնույթ չունեցավ: Կոնկրետ Յաքուփ Քադրին իր ստեղծագործության մեջ փաստել է քենալական շարժման հանդեպ թուրք գյուղացիության անտարբերությունը: Քենալական «միլլի»<sup>4</sup> շարժումը միանշանակորեն կրում էր ազգայնամոլական հակահունական և հակահայկական բնույթ ու շարունակում էր երիտթուրքերի որդեգրած ցեղասպանական ծրագրերի կենսագործումը:

Ատենախոսությունում հայ իրականության մեջ առաջին անգամ քննադատորեն անդրադարձել ենք ինչպես Յաքուփ Քադրիի ստեղծագործություններին, այնպես էլ նրա մասին խորհրդային ու թուրք գրականագետների ուսումնասիրություններին, որոնցում տեղ գտած փաստերն ու գնահատականները համադրելով փորձել ենք առավել ամբողջական ներկայացնել Յաքուփ Քադրիի գրական, քաղաքական դիմանկարը, ինչպես նաև ընտրված ժամանակաշրջանի մշակութային, հասարակական-քաղաքական զարգացումները, բացահայտել կողմնակալ գնահատականներն ու մեկնաբանությունները:

Հատկապես բանգիմաթի գրականությունից մինչև 1950-ական թթ. թուրք գրականության զաղափարական, թեմատիկ և ժանրային զարգացման միտումների, թուրքական գրաքննադատական մտքի ուսումնասիրության համար կարևորվում է Բերնա Մորանի եռահատոր մենագրությունը՝ «Քննական հայացք թուրքական վեպին, Ահմեթ Միթաթից մինչև Ահմեթ Թանփընար» (Գիրք առաջին), «Քննական հայացք թուրքական վեպին, Սաբահատթին Ալիից մինչև Յուսուֆ Աթըլզան» (Գիրք երկրորդ), «Քննական հայացք թուրքական վեպին,

Սելվա Սոյսալից մինչև Բիլգե Քարասու» (Գիրք երրորդ)<sup>5</sup>: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում թուրք գրողների և գրականագետների շրջանում բացառիկ հեղինակություն վայելած Ահմեթ Համդի Թանփընարի «19-րդ դարի թուրք գրականության պատմություն» սովորածավալ և պարբերաբար վերահրատարակվող ուսումնասիրությունը<sup>6</sup>, Հասան Յուլջելի «Սեր գրականության պատմությունից»<sup>7</sup> գիրքը, Շուքրան Քուրդաբուլի «ժամանակակից թուրք գրականություն» քառահատոր սովորածավալ մենագրությունը<sup>8</sup>, Յաքուփ Քադրիի արձակում կին-տղամարդ փոխհարաբերությունները լուսաբանող Ալի Սերդարի հետազոտությունը<sup>9</sup>:

Ատենախոսության մեջ օգտագործել ենք հայ վաստակաշատ արևելագետ, պրոֆ. Մերի Քոչարի<sup>10</sup>, ինչպես նաև թուրքագետներ Ալ. Սաֆարյանի<sup>11</sup> և Ռ. Մելքոյանի ուսումնասիրությունները<sup>12</sup>:

<sup>5</sup> Moran B., Türk Romanına Eleştirel Bir Bakış, Ahmet Mithat'tan Ahmet Hamdi Tanpınar'a, 1. Kitap, İletişim Yayınları, İstanbul, 1999, 256 s. Սույնի Türk Romanına Eleştirel Bir Bakış, Sabahattin Ali'den Yusuf Atılgan'a, 2. Kitap, İletişim Yayınları, İstanbul, 1999, 248 s. Սույնի Türk Romanına Eleştirel Bir Bakış, Sevgi Soysal'dan Bilge Karasu'ya, 3. Kitap, İletişim Yayınları, İstanbul, 1999, 138s.

<sup>6</sup> Tanpınar A. H., 19 uncu Asır Türk Edebiyatı Tarihi, Çağlayan Kitabevi, İstanbul, 2003, s. 639.

<sup>7</sup> Yücel H., Edebiyat Tarihimizden, İletişim Yayınevi/Araştırma-İnceleme Dizisi, İstanbul, 1989, 307 s.

<sup>8</sup> Kurdakul Ş., Çağdaş Türk Edebiyatı, Meşrutiyet Dönemi/1, Cilt 1, Bilgi Yayınevi, Ankara, 1994, 266s. Սույնի Çağdaş Türk Edebiyatı, Meşrutiyet Dönemi/2, Cilt 2, Bilgi Yayınevi, Ankara, 1994, 288 s. Սույնի Çağdaş Türk Edebiyatı, Cumhuriyet Dönemi/1, Cilt 3, Bilgi Yayınevi, Ankara, 1994, 316 s. Սույնի Çağdaş Türk Edebiyatı, Cumhuriyet Dönemi/2, Cilt 4, Bilgi Yayınevi, Ankara, 1994, 351 s.

<sup>9</sup> Serdar A., Yakup Kadri Karaosmanoğlu'nun Romanlarında Cinsellik, Ankara, 2002, 107 s.

<sup>10</sup> Քոչար Ս., Թանգիմաթի շրջանի թուրք գրականության մի քանի հարցերի շուրջ, Արևելագիտության հարցեր, պրակ. 1-2, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, էջ 165-166:

<sup>11</sup> Տե՛ս Սաֆարյան Ալ., «Օսմանյան մոդելի» քննադատությունը Ջիյա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքները» աշխատությունում, «Իրան-Նամե», Արևելագիտական հանդես, հ. 37, Երևան, 2001, էջ 1-6, Սույնի Ջիյա Գյոքալփը՝ կրթության և դաստիարակության հիմնահարցերի մասին, «Արևելագիտական ժողովածու», հ. 5, Երևան, 2004, էջ 288-309, Սույնի Ջիյա Գյոքալփը՝ թուրքական տնտեսության զարգացման մասին, «Հայոց Մեծ եղեռն-90: Հողվածների ժողովածու», Երևան, 2005, էջ 416-431, Սույնի Ջիյա Գյոքալփը՝ թուրք կանանց իրավունքների մասին, Թյուրքագիտական և օսմանգիտական հետազոտություններ, հ. IV, Երևան, 2006, էջ 13-37: Safarian A., Ziya Gökalp on National Education, "Iran and the Caucasus," Volume 8.2, Brill, Leiden- Boston, 2004, pp. 219-229, Սույնի On the History of Turkish Feminism, "Iran and the Caucasus," Volume 11. 1, Brill, Leiden- Boston, pp. 141-153.

<sup>12</sup> Մելքոյան Ռ., «Գյուղական ինստիտուտները» և գրական կյանքը Թյուրքիայում (1940 - 1950-ական թթ.)-«Կանթեղ», 2005, N 1, էջ 139-144: Սույնի Թյուրք գրող Ֆաթիմ Բայթուրթի «Գերանդի» վեպը, «Գարուն», 2004, N 12, էջ 71-73: Սույնի Ֆաթիմ Բայթուրթի արձակը, Սեղմագիր, Երևան, 2005, 22 էջ:

<sup>1</sup> Финн Р. Г., Турецкие дневники. Встречи. Размышления, Изд-во "Наука", Москва, 1977, с. 3-4.

<sup>2</sup> Алькоева Л. О., Очерки по истории турецкой литературы, 1908-1935 гг., Изд-во Академии наук СССР, Москва, 1959, 220 с..

<sup>3</sup> Алькоева Л. О., նույն տեղում:

<sup>4</sup> «Միլլի»-milli թուրքերենից թարգմանաբար՝ ազգային, ազգայնական:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԻՄՔԸ

Աշխատանքը կատարված է գրականության տեսության ուսումնասիրման արդի մեթոդներով ու սկզբունքներով: Այն շարադրվել է համեմատական մեթոդով և տիպաբանական սկզբունքներով: Հիմնականում առաջնորդվել ենք պատմաքննական, համեմատական, համադրական սկզբունքներով՝ փորձելով վեր հանել նյութի պատճառահետևանքային կապերը, խորքային առնչությունները:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության մեջ արծարծված հիմնական խնդիրները, կարևոր դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են ՀՀ գիտական տարբեր ժողովածուներում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ընդլայնված նիստում:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթաբաժիններով, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ համառոտ ներկայացված են հարցի պատմությունը, ատենախոսության նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, հիմնավորված թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ ԹՈՒՐՔ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՅԱՔՈՒՓ ՔԱՂԻԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՂ ՇՐՋԱՆԸ

Այս գլխում քննության է ենթակված 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբի թուրք գրական գործընթացները, որոնք պայմանավորված էին Օսմանյան կայսրության համար պատմական բարդ մի ժամանակաշրջանի սրընթաց իրադարձություններով: Մասնավորապես տարբեր աղբյուրների հիման վրա փորձել ենք հնարավորինս համակողմանիորեն ցույց տալ, թե ինչ կերպ են կայսրության տարբեր

ուղորտներում բարեփոխիչների (թանգիմաթականների) ձեռքբերումները, «նոր օսմանների» շարժման ջախջախումը, աբդուլհամիդյան բռնատիրության հաստատումը, երիտթուրքական հեղաշրջումը, ոչ թուրք ժողովուրդների տարալուծման կամ ծուլման քաղաքականության իրագործումը, նոր գաղափարական հոսանքների առաջացումը, Առաջին համաշխարհային պատերազմը, Օսմանյան կայսրության փլուզումը, քեմալական շարժման ծավալումն ու հաղթանակը և վերջապես Թուրքիայի Հանրապետության հիմնումն ազդեցություն գործել թուրքական գրականության վրա, որը շարունակում էր գտնվել ձկի ու բովանդակության փնտրտուքի մեջ: Ինչպես նախորդ շրջանի թանգիմաթյան գրականության (19-րդ դար), այնպես էլ 20-րդ դարի սկզբին, և հատկապես, քեմալական շարժման հաղթանակից հետո պայքարը շարունակվում էր ստեղծագործական նոր մեթոդների, ժանրերի, թեմաների ամրագրման ուղղությամբ:

Թուրք գրողների ստեղծագործություններում արտահայտվում են ինչպես Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման, այնպես էլ երկրի տնտեսական ու մշակութային ծայրահեղ հետամնաց իրավիճակի հետ կապված հիմնախնդիրները: 20-րդ դարի առաջին կեսին թուրք գրականության թեմատիկան պայմանավորված էր պատմական բուռն իրադարձություններով: Թուրք ազգայնական գրականության հրամայականները դրսևորվեցին՝ սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից և առավել վառ կերպով արտացոլվեցին 20-րդ դարի առաջին քառորդում: Հարկ է նշել, որ թուրք, արևմտյան, խորհրդային ու ռուսաստանյան հետազոտողներն ընդգծել են թուրք արևմտականների դավանած գաղափարախոսությունների արտաքննապես առաջադիմական տարրերը, սակայն կայսրության ոչ թուրք ժողովուրդների համար դրանք իրականում ահագնացող վտանգ էին պարունակում: Առաջին գլխում նաև ցույց ենք տվել, որ երկու դարերի սահմանագիծը բնութագրվում է օսմանիզմի գաղափարախոսության սնանկության ի հայտ գալով և թյուրքյուլուքի կայացմամբ: Երիտթուրքական հեղաշրջումից հետո շատ թուրք մտավորականներ զինվորագրվեցին այս գաղափարախոսությանը: Առաջ քաշվեց Մեծ Թուրանի՝ որպես ոչ միայն թյուրքախոս բոլոր ժողովուրդների ու ցեղերի, այլև ողջ ուրալ-ալթայյան լեզվախմբի միասնական պետականության գաղափարը, որը կարող էր հակակշռել եվրոպական միջամտություններին: Ակնհայտ է, որ թյուրքյուլուքի գաղափարախոսությունը մահացու վտանգ էր հայության համար:

«Սեփական ակունքներին վերադարձը» թուրք գրողների մոտ հաճախ դրսևորվում էր թյուրքական ժողովուրդների հին պատմության իդեալականացմամբ, թուրքերի «բացառիկ բարոյականության» ջատագովությամբ: Նման պայմաններում երբեմն փորձ էր կատարվում արևմտյան մշակութային արժեքները կտրուկ հակադրել ազգային արժեքներին, երբեմն էլ՝ համադրել այդ արժեքները:

Ահա այսպիսի քաղաքական հորձանուտում էլ սկսվում է Յաքուփ Քաղրիի գրական-հասարակական գործունեությունը: Քաղրիի ծնվել է 1889թ. մայիսի 27-ին Կահիրեում, մեծահարուստ ընտանիքում:

Որոշ ժամանակ անց նրա ընտանիքը տեղափոխվում է Իզմիրից (Չմյուռնիա) ոչ հեռու գտնվող Մամիսե քաղաքը, որտեղի դպրոցում (ռուշթիեյում) սովորելուց հետո 1903թ. Քաղրիին ընդունվում է Իզմիրի վարժարան, սակայն ուսումը չի ավարտում: 1906-1908թթ. նա սովորում է Եգիպտոսի՝ Ֆրանսիական Ֆրեբես քոլեջում: 1908թ. ընտանիքի հետ վերադառնում է Ստամբուլ, ստանում է իրավաբանական և բանասիրական կրթություն: Նույն թվականին դառնում է երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ: Քաղրիի գրական գործունեության մեկնարկը սկսվում է 1909 թվականին, այն համընկնում է «Ֆեջրի-Աթը» (“Fecr-i Atı” - «Արևածագ») գրական միավորման ստեղծման ժամանակաշրջանի հետ: Քաղրիին հետագայում էլ հիշյալ գրական միավորման սկզբունքների աննահանջ պաշտպաններից էր:

Յաքուփ Քաղրիի գրվածքներում արտացոլված է ինչպես թանգիմայան, այնպես էլ հետթանգիմայան թուրք հասարակության ամենատարբեր շրջանակների կյանքը: Սկզբնական շրջանի ստեղծագործություններն արտահայտում են երիտասարդ հեղինակի բարդ և հակասական որոնումները, ինքնուրույնության ձգտումն արվեստում: Միայնության գաղափարը նա բարձրացնում էր մասնավորապես «Աստղերի միայնություն» (“Yıldızlar Kimsesizliği”) իր արձակ ոտանավորում, որտեղ ընդգծվում է այն մոտեցումը, թե մարդկանց միջև գոյություն չունի և չի կարող լինել իսկական մտերմություն: Նրա առաջին «Նիրվանա» (Nirvana, 1909) մեկ գործողությամբ պիեսն իրենից ներկայացնում է շոպենհաուերյան փիլիսոփայության սկզբունքների գրական արտացոլումը՝ միայնության պաշտամունքով, միրվանայի միստիկական իդեալով: Պետք է նշել, որ Քաղրիին թե՛ պատանեկության, և թե՛ հասուն տարիքում մշտապես գտնվել է ֆրանսիական գրականության ազդեցության տակ:

1910թ-ից սկսած՝ նա բազմաթիվ հոդվածներով է հանդես եկել թերթերում ու պարբերականներում: 1916թ. բուժման նպատակով գրողը մեկնում է Շվեյցարիա և այնտեղ ապրում մինչև 1919թ: Շվեյցարիայից վերադառնալուց հետո նրա աշխարհայացքում կտրուկ փոփոխություն է տեղի ունենում: Այդ շրջադարձը գրողը պայմանավորում էր Բալկանյան պատերազմով (1912-1913) և Առաջին աշխարհամարտով: Նա հրաժարվում է «արվեստը՝ հանուն արվեստի» սկզբունքից և որդեգրում «արվեստը՝ հասարակության համար» սկզբունքը: Մինչ քեմալական շարժման ժավալումը Յաքուփ Քաղրիին գրել է մի շարք պատմվածքներ, որոնցում քնարական-պատմողական ձևով փորձել է արտացոլել գեղեցիկի գաղտնիքն ընկալող խորհրդապաշտ-մտավորականի հոգեկան ապրումները, սակայն հետագայում նա հրաժարվում է խորհրդապաշտությունից: Հատկապես 1916թ-ից հետո յուրացնելով «ազգային գրականության» հոսանքի սկզբունքները՝ նա կտրուկ փոփոխության է ենթարկում ինչպես իր ստեղծագործության թեման, այնպես էլ՝ լեզուն: Նա վերջնականապես հրաժարվում է սիրային ու սալոնային պատմություններ գրելուց, նրա արձակն ու հրապարակախոսությունը նպատակուղղվում են բացառա-

պես «մարդկության և ազգության» պահանջների արտացոլմանը: Յաքուփ Քաղրիին դառնում է «նոր» կամ «ազգային» գրողների ջահակիրներից մեկը: Հետագայում Քաղրիի ստեղծագործությունները թյուրքալուքի դիրքերից լայն կտավով արտացոլում էին երկրի պատմական վերոնկարագրյալ բոլոր փուլերը (թանգիմաթ, արքունիամիդյան զուլում, երիտթուրքական հեղաշրջում, քեմալական շարժում, ապա նաև հանրապետական թուրքիայի կայացում):

#### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

**ՅԱՔՈՒՓ ՔԱՂՐԻ ՔԱՐԱՍՄԱՆՕՂՈՒԻ ԳՐԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ  
ՇՐՋԱՆԸ (1920-30-ԱԿԱՆ ԹԹ.): «ՎԱՐՁՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ»,  
«ՎԵՈՒ ԳԻՇԵՐ», «ՍՈՂՈՍ-ԳՈՍՈՐ» ՎԵՊԵՐԸ**

1923թ. Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո երկրում սկսվեցին իրականացվել լայնածավալ քաղաքական, հասարակական, տնտեսական ու մշակութային փոփոխություններ: Կրոնական ընդհանրությունների վրա հիմնված հասարակությունն իր տեղը զիջեց թուրքական ընդգծված ազգայնական պետությանը: Մուսթաֆա Քեմալի իրականացրած օրենսդրական, իրավական կրոնական, լեզվական, կրթական տնտեսական բարեփոխումները միտված էին թեոկրատական պետական համակարգից անցում կատարելու աշխարհիկ (laik) պետական համակարգի: Քեմալի իրականացրած վերնախավային բնույթի «բարենորոգումները», սակայն, չկարողացան լուծել երկրում ծառայած սոցիալ-քաղաքական հիմնական խնդիրները: Արտաքին քաղաքականության ասպարեզում Մուստաֆա Քեմալը ճկուն գտնվեց և Թուրքիայի քաղաքական կողմնորոշման համար առաջարկեց իր հանրահայտ ձևակերպումը՝ «եվրոպական զլխով, բայց թուրքական սրտով»: Ինչ վերաբերում է ազգային հարցերին, ապա քեմալականները շարունակեցին կենսագործել երիտթուրքերի՝ ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ ցեղասպանական քաղաքականությունը:

Քեմալական շարժման հաղթանակը, Թուրքիայի Հանրապետության հիմնումը, երկրում անցկացված բարենորոգումներն ու թուրքական նոր պետականության հիմնադիր Քեմալ Աթաթուրքի կյանքն ու գործունեությունն իրենց անմիջական արտացոլումը գտան բազմաթիվ թուրք գրողների՝ այդ թվում Յաքուփ Քաղրիի ստեղծագործություններում: Քաղրիին անմիջականորեն կանգնած էր քեմալականության ակունքներում և Քեմալ Աթաթուրքի մտերիմն էր: Յաքուփ Քաղրիին իր ստեղծագործական երկրորդ շրջանում կտրուկ շրջադարձ է ապրում դեպի սոցիալական թեմաներն ու քեմալական շարժումը: Մուղրոսի զինադարից անմիջապես հետո (1918թ.) նա միլիվում է քեմալական շարժման լուսաբանմանը: Դառնում է “İkdam”

(«Առաջընթաց») թերթի գլխավոր հոդվածագիրը, հրապարակում է քաղաքական ու գրականագիտական բնույթի հոդվածներ: Այնուհետև թղթակցում է «Dergâh» («Միաբանություն») պարբերականին: Հայտնի է նաև, որ դեռ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, Յաքուփ Քադրին կապեր է ունեցել նաև բեքթաշիների հետ: Ուսումնասիրելով դերվիշական սովորությունները՝ Քադրին 1921թ. գրում է բեքթաշիների կյանքին նվիրված «Ծերունի Նուրը» («Nur Baba») վեպը: Գրողն արտացոլել է այդ աղանդի արտաքուստ խաղաղ, բայց իրականում դաժան կողմերը: Հանձինս վեպի գլխավոր հերոսուհի Նիզարի՝ Քադրին ստեղծում է մի կնոջ կերպար, որը հասկանում է միստիկայի խաբկանքը, իր ապրած միջավայրը պարուրող կեղծիքն ու սուտը: Քադրին նաև չի թաքցնում աղանդավորության սոցիալական արմատները: Նա քողագերծում է նաև բեքթաշիների մոտ առկա սեռային շահագործումը: Հետևելով աննօրյա դեպքերին՝ մամուլում հրապարակած իր հոդվածներով էլ Քադրին համակողմանիորեն աջակցում էր քեմալականներին: 1921թ. նա տեղափոխվում է Անկարա: Որպես պաշտոնյա՝ շրջում է Քյոթահիայում, Սիմավում, Գեդիզում, Եսքիշեհիրում, Սաքարիայում, ակամատես լինում այսպես կոչված «օկուպացված» գյուղերում ու քաղաքներում քեմալականների մղած «ազատագրական» կռիվներին: «Միլի» շարժման հաղթանակից հետո, Յաքուփ Քադրին 1923-1931թթ. ընտրվում է ԹԱՄԺ-ի պատգամավոր (նախ՝ Մարդինի, ապա՝ Մանիսայի ընտրաշրջաններից):

Երկրում և գրական կյանքում իրադրությունը հատկապես փոխվեց, երբ 1921թ. աշնանը, թուրքական բանակը՝ Մուսթաֆա Քեմալի հրամանատարությամբ, Սաքարիա գետի ափին տարան առաջին լուրջ հաղթանակը՝ պարտության մատնելով հույներին: Այդ պահից սկսած՝ թուրք գրականության գրեթե բոլոր ներկայացուցիչները սկսեցին գրել միայն քեմալական շարժման մասին: Լույս աշխարհ եկան Յաքուփ Քադրիի և այլոց նոր ստեղծագործությունները. նրանք գովերգում էին հասարակ մարդու հերոսությունն ու արիությունը, որ ցուցաբերում էին պատերազմի տարիներին: Նոր Թուրքիայի գրողները ձգտում էին հասկանալ երկրում տեղի ունեցող քաղաքական անցուղարձեղը, փոփոխվող կյանքի, տեղաշարժերի պատմական բովանդակությունը:

Թուրք գրականագետների կարծիքով 1920 - ական թթ. քեմալական գաղափարախոսության ջատագովությամբ հանդես եկող գրողները, այդ թվում և Քադրին, իրենց ստեղծագործություններում մեծ տեղ էին հատկացնում նաև «միջին խավի» սոցիալ-հոգեբանական խնդիրներին, թեև այդ ժամանակաշրջանի թուրք իրականության համար «միջին խավ» սահմանումն իսկ խիստ պայմանական է: Միաժամանակ ակնհայտ է վերոհիշյալ գրողների գործերում քեմալական սկզբունքներից մեկի՝ «հալքչըլըքի» արտացոլման միտումը: Հենց Յաքուփ Քադրին էլ շուտով ճանաչվում է որպես «Ազգային գրականության կանոնի» հիմնադիրներից մեկը:

Թուրքերի մեջ այսպես կոչված «ազգային ինքնագիտակցության» վերելքին մեծապես նպաստեցին «ազգային գրականության»

հոսանքի ներկայացուցիչները՝ Յաքուփ Քադրին, Հալիե Էդիփը, Ռեշադ Նուրին, Օսման Ջեմալը, Միհթաք Ջեմալը և ուրիշներ, ովքեր իրենց վեպերում, պատմվածքներում, նովելներում պատկերում էին թուրք «հասարակ ժողովրդի» գիտակցական վերելքը, ձգտում էին արթնացնել ազգայնական բնազդները: Որպես կանոն՝ իբրև «դրական հայրենասեր» կերպարներ հանդես էին գալիս քեմալական շարժման մասնակիցները՝ մտավորականներ, կրթված թուրք սպաներ: Բերենք մեկ օրինակ. Յաքուփ Քադրին «Օտարը» վեպում պատկերել է այդ ժամանակներին բնորոշ մի տեսարան: Երիտասարդ մտավորականը փորձում էր թուրք գյուղացիների մեջ արթնացնել ազգային ինքնագիտակցությունը՝ քարոզելով նրանց սատարել Քեմալ փաշային: Գրողը նաև ներկայացրել է զավառներում, հասարակ ժողովրդի շրջանում առկա մտայնությունը. շատերը դեռևս չունեին ընդգծված թուրքական-ազգային ինքնության գիտակցությունը, այլ գերիշխող էր իսլամական հավաքականությանը պատկանելու զգացումը և մինչ քեմալական շարժումը, օսմանահպատակ թուրքերի ճնշող մեծամասնության, հատկապես «հասարակ ժողովրդի» ինքնագիտակցությունը հիմնականում խարսխվում էր կրոնի վրա: Քադրին այդպիսի իրականությանը փորձում էր հակադրել «ազգայինը», որը շատ դեպքերում վերաճում էր ազգայնամոլության:

Անշուշտ, ժամանակաշրջանի թուրք գրողները տարբեր կերպ էին մոտենում իրենց ստեղծագործությունների նյութի ընտրությանը և տարաբնույթ մեկնություններ տալիս ժամանակի իրողություններին, մասամբորապես առավել տարածում ստացած ժանրի ստեղծագործություններում նովելներում էլ տարբեր կերպ են լուսաբանվել նույնիսկ թուրք գրողների համար այնպիսի համընդհանուր թեմաներ, ինչպիսիք են քեմալական շարժումը, հանրապետության ճակատագիրը, վերաբերմունքը Արևմուտքի նկատմամբ և այլն: Այդ հանգամանքով է պայմանավորված նաև գրական տարբեր խմբավորումների առաջացումը:

20-րդ դարի 20-30-ական թթ. թուրք գրականության կենտրոնական էսթետիկական հիմնահարցն է դառնում «հասարակայնությանն օգտակար արվեստի սկզբունքը», որտեղ տրամախաչվում են արվեստի նկատմամբ հակադիր հայացքները: Թուրքական մշակույթի, մասնավորապես, գրականության մեջ փոփոխությունների մասին խոսելով՝ Յաքուփ Քադրին 1934թ. Մոսկվայում խորհրդային գրողների առաջին համագումարում ունեցած զեկուցման մեջ ընդգծում էր թուրք գրողների «հեղափոխականության» թեզը:

Թուրք գրողների ստեղծագործությունները տարբերվում են նաև ըստ քեմալական շարժման մեջ ժողովրդի դերի մեկնաբանման: Յաքուփ Քադրիի ստեղծագործության մեջ ժողովուրդը ներկայացվում է որպես կրավորական և մոլեռանդ մի զանգված ու պատերազմի զոհ, իսկ որպես իսկական հերոսներ ու բացառիկ անհատներ են ներկայացվում քեմալական սպաները, ում մահը հաճախ ձեռք է բերում հանուն ժողովրդի նահատակության բնույթ:

Այս ժամանակաշրջանում թուրք գրականության մեջ երևան եկավ նոր հերոսի՝ «փոքր մարդու» կերպարը: Նոր երևույթ էին գավառական կյանքը պատկերող պատմվածքները, որոնցում արծարծվում էին փոքրասիական շրջանների՝ գյուղացիների կարիքներն ու խնդիրները: Գրականության մեջ փորձեր էին կատարվում առանձին անհատի նեղ աշխարհից քայլ կատարել դեպի մեծ աշխարհ, դեպի իրական կյանք: Հասարակական կարծիքը դեպի գյուղացիական խնդիրներն ուղղորդելու գործում մեծ դեր կատարեց «Kadro» ամսագիրը, որտեղ Յաքուփ Քադրին գյուղացու վիճակի բարելավմանը վերաբերող մի շարք հոդվածներ է հրատարակել:

20-ական թթ. թուրք գրականության գլխավոր հերոսն է դառնում Մուսթաֆա Քեմալը (Աթաթուրքը): Նրա, առանց չափազանցության, «պաշտամունքը» ցայժմ էլ թուրքիայի քաղաքական ու գրական կյանքի անբաժան մասն է: Ժամանակակիցները նրան անվանում էին «Գազի», «ժողովրդի հայր», «ազգի հայր», «Հանրապետության ճարտարապետ»: Այդ շրջանի թուրք գրողներից շատ-շատերը, գտնվելով նրա գաղափարական ու քաղաքական ազդեցության տակ, իրենց պարտքն էին համարում հրապարակել ոչ միայն հուշեր ու հրապարակախոսական բնույթի նյութեր՝ նվիրված իրենց առաջնորդին, այլև ամենատարբեր ժանրի գեղարվեստական ստեղծագործություններ: Թուրք գրողները, հաճախ տուրք էին տալիս անհատապաշտությանը, ծայրահեղորեն իդեալականացնում ու փառաբանում էին Մուսթաֆա Քեմալին՝ նրան ներկայացնելով որպես գերմարդ: Յաքուփ Քադրին քեմալական շարժմանը նվիրեց մի ողջ ժողովածու՝ «Պատմվածքներ ազգային պայքարի մասին» (1922)<sup>13</sup>: Ահա թե ինչպես է Քադրին բնութագրում Քեմալին. «Այդ հզոր մարդը միշտ արտահայտում էր սիրալիրություն ու մեծահոգություն .... Ոչ մի վայրկյան նա չէր կորցնում իր սառնասրտությունն ու արժանապատվությունը: Նրա կողքին թուրքերը ձեռք էին բերում ուժ և վստահություն: Նա հավատ էր ներշնչում հաղթանակների նկատմամբ, որովհետև ինքն էր համոզված մեր գործի արդարության մեջ»<sup>14</sup>: Յաքուփ Քադրին էլ Մուսթաֆա Քեմալին պատկերում է որպես բացառիկ անհատականություն. «Նա կարողանում է կանխազգալ մոտալուտ փորձությունը.... նա մարդկանց ճանաչում է առաջին հայացքից»<sup>15</sup>: Աթաթուրքին ներկայացնելով որպես «ազգասիրության և հայրենասիրության» մարմնացում՝ Քադրին գրում է. «Ամենօրյա գործերում հանդես բերած սառնասրտությունն ու համբերատարությունը վերածվում է գիշատիչ վայրագության, երբ խոսքը վերաբերում է հայրենիքի անվտանգությանն ու պատվին: Բավական էր լսել մի բառ՝

ուղղված թուրքիայի դեմ, լինի դա երկրի ներսում, թե աշխարհի ամենախուլ անկյունում, նա անմիջապես զգուշանում է և պատրաստվում հարձակման»<sup>16</sup>:

Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի կերպարն արտացոլվել է նաև թուրքական պոեզիայում: Ժամանակաշրջանի գրեթե բոլոր ճանաչված թուրք բանաստեղծներն իրենց ստեղծագործություններում փառաբանել են Աթաթուրքին, «համարել իրենց երջանիկ, քանի որ բախտ են ունեցել ապրել նրա հետ նույն ժամանակաշրջանում, կիսել նույն պատմությունը, նույն օրերը»: Թերևս հետաքրքրական փաստ է նաև այն, որ Մուստաֆա Քեմալն ինքն էլ գրել է բանաստեղծություններ: Դրանք թեև գեղարվեստի տեսանկյունից լուրջ արժեք չեն ներկայացնում, սակայն բացահայտում են Քեմալի քաղաքական հայացքները և քեմալականության մերձավոր կապերը թյուրքյուլուքի գաղափարախոսության հետ: «Օղուզի գավակները» («Oğuz oğulları») բանաստեղծության մեջ նա պատմական անդրադարձ է կատարում ու վերաարժևորում «Օղուզի գավակների և թոռների» պատմական առաքելությունը:

Սակայն և ոչ մի թուրք գրող չանդրադարձավ ոչ թուրք ազգերի հարցում Քեմալի վարած ծայրահեղ հետադիմական, ազգայնամուլական քաղաքականությանը: Արյունոտ Քեմալին ներկայացնում էին համարյա որպես ԺԱՆՆԱ Դարկի նման ազատության համար պայքարի ելած սրբապսակ հերոսի: Իրականում Մուսթաֆա Քեմալը, շարունակելով երիտթուրքերի քաղաքականությունը, երկրում իրականացրեց ոչ թուրք ժողովուրդների ծուլման և ֆիզիկական ոչնչացման ծրագիր, որի գոհը դարձան տասնյակ հազարավոր հայեր Մարաշում, Հաճընում, Ջեթունում (1919-1921) և Ջմյունիայում (1922): Դաժան հալածանքի ենթարկվեցին հույները, ասորիները, քրդերը: Քեմալականները 1920թ., գործակցելով բուլշևիկների հետ, հարձակում սկսեցին Հայաստանի Հանրապետության վրա: Քեմալական ագրեսիայի հետևանքով հայ ժողովուրդը զրկվեց իր կենսական տարածքներից և տվեց 200 հազար զոհ: Միանգամայն իրավացի են հայ պատմաբաններն ու թուրքագետները, ովքեր քննադատական խոսք են ուղղում այն հետազոտողներին, որոնք այդ շարժումը զնահատելիս հաճախ անզուսպ հիացմունքով են արտահայտվում Քեմալի և քեմալականների մասին՝ մոռացության տալով գրաված վայրերում խաղաղ բնակչության նկատմամբ իրականացրած անասելի ոճրագործությունները:

1920-30-ական թթ. գրականության մեջ գլխավոր թեմաներից մեկն էլ հանրապետական թուրքիայի հռչակումից հետո պատերազմի հետևանքների պատկերումն էր: Գրողների մի մասը քեմալական «հեղափոխությունը» համարում էր ավարտված, երբ վերացվեցին սուլթանաթը և խալիֆաթը: Հանրապետական թուրքիան իդեալականացնող գրողները կարծում էին, որ մի շարք բարեփոխումների անցկացումից հետո պետք է սկսվեր հասարակության բոլոր խավերի համագործակցության դարաշրջանը:

<sup>13</sup> Նոր լատինատառ հրատ. տե՛ս Karaosmanoğlu Y. K., Milli Savaş hikayeleri, İstanbul, 1997, 188s.

<sup>14</sup> Караосманоглу Я. К., Дипломат поневолия, Воспоминания и наблюдения, сокращенный перевод с турецкого Г. Александрова. Изд.-во «международные отношения, Москва, 1966, с. 27-28.

<sup>15</sup> Караосманоглу Я. К., Дипломат поневолия, с. 35.

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում:



1920-ական թթ. գրականության մեջ նշանակալի տեղ է զբաղեցնում նաև կնոջ թեման: Յուրատեսակ կնոջ կերպար է ստեղծում նաև Յաքուփ Քադրին: Նրա կին-հերոսուհին տոգորված էր քեմալական գաղափարներով, մտազբաղ էր կրթի ապագայով, ուներ ազատ մտածելակերպ և համարձակ էր իր անձնական կյանքը տնօրինելու մեջ: Եթե թանգիմաթականներն ընդամենը նկարագրում էին կնոջ իրավագուրկ և անօգնական վիճակը, ապա քեմալական շրջանի գրողները կերպավորեցին մտավորական թրջուհուն, որը պատրաստ էր մարտնչել հանուն իր ազատության, հանուն իր անձնական երջանկության:

Թուրքիայի պատմության խոշորագույն իրադարձությունների շրջանում թուրք գրականության մեջ առաջ քաշվեց ևս մեկ նոր կենսական խնդիր, այն է՝ մտավորականի և ժողովրդի փոխհարաբերության խնդիրը: Մտավորական հերոսը ներկայացվում է ռազմական գործողությունների միջավայրում կամ գյուղում: Առաջին դեպքում նա թուրքական բանակի սպա է, իսկ երկրորդ դեպքում ուսուցիչ կամ բժիշկ: Գրողները այդ հերոսներով ձգտում էին ընդհանրացնել հայրենասիրության, ժողովրդականության և լուսավորչականության գծերը:

1923թ. լույս է տեսնում Յաքուփ Քադրիի «Կարծու առանձնատունը» («Kiralik Konak») վեպը: Քադրիի այս ստեղծագործությունը թե՛ իր բովանդակությամբ, թե՛ կերպարներով ու հեղինակի դրսևորած երևակայության առումով, թուրք գրականագետների պնդմամբ, առանձնահատուկ տեղ է գրավում: Թուրքական հասարակության համար վեպն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը, քանի որ Քադրիի վեր հանած որոշ խնդիրներ այժմ էլ շարունակում են մնալ Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի օրակարգում: Վեպում արտացոլվել են Օսմանյան կայսրությունում դեռևս 18-րդ դարից սկիզբ առած արևմտականացման միտումները, որոնք որպես քաղաքական գործընթացներ կյանքի էին կոչվել արդեն թագիմաթի ժամանակաշրջանում, սակայն վերոհիշյալ վեպի կոնկրետ գործողությունները ծավալվում են երկրորդ սահմանադրական շարժման տարիներին: Ստեղծագործության հիմնական թեման ավանդական հասարակական կառույցների քայքայումն է: Հեղինակը նկարագրում է երկրում ստեղծված իրավիճակը, ցույց տալիս, թե ինչպես է քաղաքական ու զինվորական բյուրոկրատիան դրսի ուժերի օգնությամբ իշխանությունն իր ձեռքը վերցրել: Յաքուփ Քադրին վերոհիշյալ վեպում նաև ձգտում էր արտացոլել սերունդների հակասությունը, ձաղկել Արևմուտքին ընդօրինակելը, աշխարհաքաղաքացիությունը, մարդկային հարաբերությունների այլասերումը: Հարկ է նշել, որ վեպը գեր էր սխեմատիզմից:

1928թ. լույս է տեսնում Քադրիի «Վճռի գիշերը» («Hüküm Gecesi») հայտնի վեպը, որում հեղինակը, ժամանակագրորեն ընդգրկելով 1908-ից մինչև 1913 թվականները, բացահայտում է օսմանյան երկրորդ սահմանադրության դարաշրջանի քաղաքական իրադարձությունները: Հեղինակը նաև բացահայտում է «Միություն և

առաջադիմություն» կուսակցության և ընդդիմության միջև ի հայտ եկած քաղաքական բախումները: Նրա գնահատմամբ՝ դա մի աթուռակոչ էր՝ հեռու ժողովրդի կենսական խնդիրներից ու նպատակներից: Քադրին իր այս վեպում Օսմանյան կայսրության մայրամուտի շրջանի պետական գործիչներին ու մտավորականներին ներկայացնում է որպես Արևմուտքի գործիք: Գրողը նաև արտացոլում է մի սերնդի պատմություն, որը չգիտեր, թե ինչն է պաշտպանում և ինչին է դեմ: Քադրիի «Վճռի գիշերը» վեպն իրավամբ գնահատվել է որպես քաղաքական ուղղվածության ստեղծագործություն:

1928թ. իրատարակվում է Յաքուփ Քադրիի «Սողոմ-Գոմոր» վեպը: Գրողը իր առջև խնդիր էր դրել գեղարվեստորեն նկարագրել Ստամբուլում օտար ուժերի կողմից իրականացված կամայականություններն ու անօրինականությունները: Հանընդհանուր սանձարձակության և թողվության մթնոլորտը լրացնում են թուրք «բարձրաշխարհիկ» հասարակության անբարո կյանքի պատկերները: Վեպում սուր քննադատության են ենթարկվում «վերնախավի» ցինիզմը և այլասերությունը: Այստեղ ևս պատմական իրադարձությունները թուրք գրողի համար կարևոր ֆոն են՝ ցույց տալու հերոսների սոցիալ-հոգեբանական ու բարոյական հատկանիշները:

Մտավորականության բազմաթիվ խնդիրներին Քադրին անդրադարձել է նաև 1937թ. իրատարակած իր «Աքսորը» («Bir Sürgün») վեպում, որն ունի հակաարևմտյան սուր ուղղվածություն: Վեպում Քադրին դիտարկում է բուրժուական քաղաքակրթության պատրանքային պատկերացումները, որոնց գերին էին դարձել իր հայրենակիցները, ցույց է տալիս արևոյան խորթ արժեքների կործանարար հետևանքները թուրք մտավորականի համար: Վեպում քննության են առնվում Աբդուլ Ազիզի ժամանակաշրջանը, այնուհետև Աբդուլ Համիդ II-ի բռնապետության դեմ պայքարող երիտթուրքերի կյանքը:

Յաքուփ Քադրին տարբեր տարիների իր հոդածներն ու գրառումները ժողովել ու իրատարակել է «Էրգենեքոն» («Ergenekon», 1939) գրքում: Հետագայում գրել է «Համայնապատկեր» («Panorama», 2 cilt. 1953-54), «Կրկին այդ երգը» («Her O Şarkı», 1956) վեպերը, ինչպես նաև «Իմ մոր գիրքը» («Anamın Kitabı», 1957), «Հայրենիքի ճանապարհին» («Vatan Yolunda», 1958), «45 տարի քաղաքականության մեջ» («Politikada 45 Yıl», 1968) հուշագրությունները, «Երիտասարդություն և գրական հուշեր» («Gençlik ve Edebiyat Hatıraları», 1969) գրքերը:

1955թ. Քադրին թոշակի է անցնում և երկրում շրջելով՝ շարունակում է տարբեր թերթերի և պարբերականների համար հոդվածներ գրել: 1957թ. ստանձնում է «Ազգ» («Ulus») թերթի խմբագրի պաշտոնը: 1961թ. Թուրքիայի դեմոկրատական կուսակցության իշխանությունից հեռանալուց հետո նա կրկին ընտրվում է ԹԱՄԺ-ի պատգամավոր, սակայն իրաժարվում է նաև ժողովրդահանրապետական կուսակցության անդամակցությունից, քանի որ համարում է, որ վերջինս իրականում շեղվել է Աթաթուրքի սկզբունքներից: 1965թ.

Յաքուվի Քադրին հեռանում է ակտիվ քաղաքական գործունեությունից, սակայն ղեկավարում է Թուրքիայի ամենաազդեցիկ «Անադոլու» կրատվական գործակալությունը: 1974թ. դեկտեմբերի 13-ին վախճանվում է Անկարայում:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՅԱՔՈՒՎ ՔԱԴՐԻ «ՕՍԱՐԸ» ԵՎ «ԱՆԿԱՐԱ» ՎԵՊԵՐԻ ԳԱՐԱՓԱՐԱԿԱՆ ՈՒ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԴՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յաքուվի Քադրի Քարաօսմանօղլուն 30-ական թթ. իր ստեղծագործություններում ձգտում էր իրապաշտորեն շոշափել արդիական թեմաները, միաժամանակ այս շրջանի գործերում ակնառու են գրողի գաղափարական հակասականությունը և անկայունությունը իրականության զնահատման հարցում: Սա հատկապես զգալի է գյուղացիների խնդիրների մեկնաբանություններում, այն խնդիրների, որոնք առավել ցայտուն էին դարձել «թուրքական հեղափոխության» սխալ հաշվարկների հետևանքով, ինչը ոչ մի կերպ չէր ուզում ընդունել Յաքուվի Քադրին: Ի տարբերություն «դեմոկրատական» ուղղությանը հարող գրողների՝ Քադրին պատկանում էր այն թուրք մտավորականների շարքին, ովքեր շարունակում էին հավատալ քեմալականության դրույթներին, և իրականության անկատարությունն արդարացնում էին քեմալական բարեփոխումների անցկացման հապաղմամբ, ինչպես նաև՝ մտավորականների անտարբերությամբ: 1932թ. լույս է տեսնում Յաքուվի Քադրի Քարաօսմանօղլուի «Օտարը» («Yaban») վեպը, որի առանցքը կազմում է թուրք մտավորականի և գյուղացու կերպարների հակադրումը: Երդվյալ քեմալական Քադրին այս վեպը գրել է քարոզչական նպատակով՝ սատարելու Աթաթուրքի ձեռնարկած «լուսավորչական գործը», որով իբր պետք է լուծվեին նաև կարդային ու սոցիալ-տնտեսական խնդիրները: Պատկերելով իր ժամանակի Թուրքիայի հետամնացությունը, բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող գյուղացիության աղքատությունն ու տգիտությունը՝ հեղինակն առաջ է քաշում «մշակութային հեղափոխության» անհրաժեշտության գաղափարը, նաև գեղարվեստի միջոցով փորձում լճացած նահապետական կարգերը վերացնելու կոչ անել, գյուղացիներին հաղորդակից դարձնել ժամանակակից քաղաքակրթության նվաճումներին և արժեքներին: «Օտարը» վեպի թեման քեմալական շարժման տարիներին թուրք մտավորականի և գյուղացու միջև եղած խորը անջրպետն է: «Անատոլիայի»<sup>17</sup> կիզված հողի վրա գոյատևող՝ ընդամենը մեկ գյուղի կյանքի օրինակով հեղինակը փորձել է ներկայացնել Թուրքիայի գյուղացիության կենսածնի ընդհանրական

<sup>17</sup> Անատոլիա ասելով՝ հեղինակը նկատի ունի Թուրքիայի փոքրասիական շրջանները:

պատկերը: Թուրք գյուղացու և նրան միանգամայն օտար մտավորականի միջև դարերից եկած և դեռևս շարունակվող մի մեծ անդունդ կար. նրանք ունեին թե՛ լեզվական, թե՛ աշխարհընկալման տարբերություններ: Թուրք մտավորականն էլ իր հերթին չէր ճանաչում թուրք գյուղացուն, չգիտեր նրա կենսական և հոգեբանական ծանր խնդիրները: Յեղիմակի պնդմամբ վեպում բերված փաստերն իրական են, որոնք նա գրառել է, երբ Սաքարիայի ճակատամարտից հետո պաշտոնական պատվիրակության կազմում այցելել է երկրի փոքր-ասիական տարածքները: Ստեղծագործության դիպաշարի հիմքում ընկած է ոմն Ահմեդ Ջելալի հուշատետրը, կիրարկված են եվրոպական ռեալիստական վեպի բնորոշիչներն ու վեպ-հուշագրության հնարանքը:

Քադրին, տուրք տալով սխեմատիզմին, առավել կանգ է առել իրական վիճակ ստեղծելու, մակերեսային նկարագրումների ու թուրք-չլուլուքի քարոզչության վրա և մեր կարծիքով չի կարողացել թափանցել հերոսների ներաշխարհը, փորձել է արհեստականորեն ստեղծել հոգաբանական հանգամանքներ ու տիպեր: Ըստ այդմ վեպն առավելապես ծրագրային-գաղափարախոսական է՝ ի վնաս գեղարվեստականության: Յենց հեղինակի խոստովանությամբ էլ. ««Օտարը» վեպ չէ, ոչ էլ՝ արվեստ կամ գրական ստեղծագործություն. այն մի ողբ է անապատի մեջ»<sup>18</sup>: Իր վեպում Քարաօսմանօղլուն մտավորական-գյուղացի անջրպետի գլխավոր մեղավոր է համարում օսմանյան իշխանությանը, որը մոռանալով գյուղացուն՝ ոչ մի քայլ չձեռնարկեց նրան կրթելու, նրա կյանքը բարելավվելու ուղղությամբ: Գյուղացին պարզապես հարկահանման ու կեղեքման աղբյուր էր, և ոչ ավելին: Յաքուվի Քադրիի «Օտարը» վեպը խտացնում է քեմալականության շրջանի թուրք գրականության միտումները, ներկայացնում թուրք իշխանությունների որդեգրած թուրքիզմի քաղաքականության պտուղները:

Յեղիմակը բազմաթիվ դրվագների միջոցով ցույց է տալիս, որ թուրք գյուղացին դեռևս չունեւր ընդգծված թուրքական-ազգային ինքնագիտակցություն, այլ գերիշխող էր իսլամական հավաքականության պատկանելու զգացումը: Որպես սոցիալական և գաղափարական առաջընթացի արդյունք՝ վեպի վերջում գյուղացիները կամաց-կամաց կարծես սկսում են ընկալել «հայրենիքի» գաղափարը: Յեղիմակը, հետևելով թուրքչլուլուքի գաղափարախոսներին, փորձում է թուրք գյուղացու մեջ արթնացնել «անատոլիական» հողերի նկատմամբ «հայրենասիրության» զգացում՝ շատ լավ հասականալով, որ այդ երկրի բնիկ-տերերը՝ հույները, հայերն ու ասորիները, կամ բնաքնջված էին, կամ արտաքսված, կամ էլ՝ բռնի իսլամացված: Յաքուվի Քադրին, լինելով իշխանամետ մտավորականության կենտրոնական դեմքերից մեկը, քննադատելով գյուղացու հետամնացությունը՝ ամբողջ մեղքը բարդում է նախկին օսմանյան իշխանությունների և նրանց կամակատար աշխարհաքաղաքացի թուրք մտավորականի վրա՝ միաժամանակ կարևորելով նաև նոր պետականության խիստ

<sup>18</sup> Karaosmanoğlu Y. K., Yaban, İletişim Yayınları, 1970, s.6.

կենտրոնացվածության անհրաժեշտությունը: «Օտարը» համարվում է թուրք գրականության մեջ առաջին ռեալիստական վեպը, և հատկանշական է, որ վերահրատարակվել է ավելի քան երկու տասնյակ անգամ:

1934թ. Քաղրին գրում է իր «Անկարա» («Ankara») հայտնի ստեղծագործությունը, որը նվիրված է ինչպես Թուրքիայի ոչ վաղ անցյալին ու ներկային, այլև ապագային: Այն կարծես «Օտար»-ի շարունակությունը լինի: Վեպում գործողությունները սկսում են քենալական շարժման տարիներից և ձգվում մինչև 1940-ական թթ.: Այսպիսի ընդարձակ ֆոնի վրա ծավալվում են քենալական գաղափարներով տոգորված հերոսուհու կյանքի պատմությունը: Վեպում հեղինակն անդրադարձել է նաև թուրք հասարակության գարգացմանը խոչընդոտող մի շարք խնդիրների՝ հասարակության առաջադիմությանն ու անկախությանը խանգարող կրոնաավատական սովորություններին, վերևները քայքայող կաշառակերության տարածմանը: Գրողը նաև հանդես է գալիս քաղքենիների դեմ, ովքեր առաջնորդվում էին աշխարհաքաղաքացիական գաղափարներով: Այս վեպը քաղրիական ահազանգ է երկրի ճակատագրի և այն գաղափարների կորստի համար, հանուն որոնց եղել էր «հեղափոխությունը»: Վեպի գլխավոր հերոսուհու՝ Սելմայի և նրա երրորդ ամուսնու՝ Նեջաթի կերպարներով նա կերտում է իր մարդ-մտավորականի իդեալը, այն մարտիկների, ովքեր պայքարում էին քենալական գաղափարների իրականացման համար: Քանի որ, ըստ Քաղրիի, միայն քենալական գաղափարները կյանքի կոչելով կարելի էր հասնել պետության բարգավաճմանը: Վեպի առաջին մասը գրված է ռեալիստական մեթոդի կիրառումով, սակայն հեղինակը, հատկապես երրորդ գլխում ամբողջովին հեռանում է իրապաշտությունից և անցում կատարում ուտոպիայի՝ պատկերելով իր երազած Թուրքիան: Նրա կերպարները թեև տոգորված են քաղրոյական գաղափարներով և հարթում են արևմտականացման ճանապարհը, սակայն շարունակում են մնալ էությանը և արժեհամակարգով ազգայնամոլ: Փաստորեն Քաղրին իր այս վեպում կերտում և առաջադրում է նոր (ազգային ինքնություն ունեցող) թուրքերի կերպարներ, որոնք համապատասխանում էին քենալական գաղափարախոսության ջատագովությանը հանդես եկող քաղրոյականների երազած «մոդելին»:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով ատենախոսության դրույթները՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Յաքուվի Քաղրին, որպես գրող հանդես գալով երկրորդ Սահմանադրության (1908) միջավայրում ու դառնալով «Fecr-i Ati» գրական միավորման հիմնադիրներից և նրա գաղափարների պաշտպաններից մեկը՝ միաժամանական «սերվեթ-ի ֆյունունական» դպրոցի գրական ավանդույթների շարունակողն էր:

2. Ստեղծագործական առաջին շրջանում (1908-1922թթ.) հեղինակը գտնվում էր եվրոպական փիլիսոփայության և ֆրանսիական գրականության ազդեցության տակ: Հետագայում Քաղրին իր հայացքն ուղղելով դեպի ազգային խնդիրները, հրաժարվում է նաև «արվեստն արվեստի համար» սկզբունքից, սկսում է առաջնորդվել «արվեստը հասարակության համար» սկզբունքով և նրա գրական ինքնությունն արտահայտվում է քաղաքական ինքնության հետ սերտորեն միահյուսված:

3. Յաքուվի Քաղրիի կյանքում շրջադարձային դեր խաղացին Մուսթաֆա Քենալն ու քենալական շարժումը: Թուրքյուլուքի գաղափարախոսության հետևորդ գրողների շարքում՝ Քաղրին նույնպես աշխարհաքաղաքացիությունը մշտապես համարել է լուրջ վտանգ (մասնավոր՝ նորաստեղծ թուրքական պետության կայացման պարագայում), և արևմտականացման ջատագովության հարցում որդեգրել է քենալական հետևյալ կարգախոսը՝ «Թուրքական սրտով, բայց եվրոպական գլխով»:

4. 1920-30-ական թթ. քենալական գաղափարախոսությանը հարող թուրք գրողները (մասնավորապես Յաքուվի Քաղրի Քարասամանօղլուն) պատկերում էին թուրքերի ազգային ինքնագիտակցության վերելքը՝ հաճախ արթնացնելով ազգայնամուլական բնազդներ:

5. 1920-30-ական թթ-ից թուրքական գրականության մեջ անրակայվեցին *քենալական շարժման, պատերազմական գործողությունների, նորաստեղծ Թուրքիայի Հանրապետության, Քենալ Աթաթուրքի և նրա գաղափարների ջատագովության, հասարակ ժողովրդի սոցիալ-կենցաղային իրական պայմանների (սոցիալական անարդարության, «փոքր մարդու», գյուղացու ծանր վիճակի), կնոջ ազատության, մտավորականի և ժողովրդի միջև եղած անջրպետի* թեմաները:

6. Ժամրային առումով թուրք գրականության մեջ առաջատար են դառնում *վեպն ու նորավեպը*, ինչը թուրք և եվրոպական գրականագետներն անմիջականորեն կապում են իրապաշտական մեթոդի կայացման հետ: Թուրքական մովելի ու վեպի զարգացման գործում իր ուրույն տեղն ունի Յաքուվի Քաղրին:

7. Հետևելով Ջիյա Գյոքալփի լեզվաբանական ու գրականագիտական սկզբունքներին՝ Յաքուվի Քաղրին պաշտպանում էր թուրքերենի պարզեցման բարեփոխումները՝ փորձելով իր ստեղծագործությունների լեզուն առավել մերձեցնել ժողովրդախոսակցականին:

8. Թե՛ Յաքուփ Քադրի Քարաօսմանօղլուի ստեղծագործական կյանքում, թե՛ ընդհանրապես թուրքական արձակի պատմության մեջ, և թե՛ եվրոպական գրականագետների կողմից ավանդաբար կարևորվել են «Ծերունի Նուրը», «Վարձու բնակարան», «Վճռի գիշերը», «Սողոմ և Գոմոր», «Օտարը», «Անկարա» վեպերը, որոնք այժմ էլ ունեն արդիական հնչեղություն: Վերոնշյալ վեպերում հեղինակը քննադատել և թյուրքյուլուքի դիրքերից ձաղկել է կրոնաավատական մնացուկները, քայքայիչ կաշառակերությունը, Արևմուտքին կույր ընդօրինակումը, աշխարհաքաղաքացիությունը, բեքթաշիական աղանդներում հարաբերությունների այլասերումը, թուրք մտավորականի և գյուղացու միջև եղած խորը անջրպետը՝ ստեղծելով իր քաղաքական ուտոպիայի՝ ապագայի թուրքիայի տեսլականը:

8. Յաքուփ Քադրի Քարաօսմանօղլուն փորձել է կերտել «նոր թուրքերի» կերպարներ, որոնք համապատասխանելու էին «ազգայնական» հռչակված, սակայն իրականում ազգայնամոլական պետության կայացմանը նպատակաուղղված քեմալական գաղափարախոսական մոդելին, բայց այդ կերպարներն, արտաքուստ արևմտականացման գափարներով տոգորված լինելով հանդերձ, շարունակում են մնալ խիստ հետադիմական:

#### ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՏԱՐԱՎԿԱԾ ԳՈՂՎԱԾՆԵՐ

1. Դավթյան Ա., Յաքուփ Քադրի Քարաօսմանօղլու. գրական դիմանկարի փորձ, «Կանթեղ», 2010, էջ 41-51 (համահեղինակ՝ Լ. Սահակյան):
2. Դավթյան Ա., «Քադրոյական գաղափարների արտացոլումը Յաքուփ Քադրի Քարաօսմանօղլուի «Անկարա» վեպում», «Կանթեղ», 2010, էջ 37-44:
3. Դավթյան Ա., Մտավորականության և գյուղացիության փոխհարաբերությունների արտացոլումը Յաքուփ Քադրի «Օտարը» վեպում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VII, Երևան 2011, «Լուսակն» հրատ., էջ 333-354:

ДАВТЯН АРАМ АТОМОВИЧ

#### ОТРАЖЕНИЕ КЕМАЛИСТСКОЙ ИДЕОЛОГИИ В ПРОЗЕ ЯКУБА КАДРИ КАРАОСМАНОГЛУ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности Ж. 01.07 – «Зарубежная литература»

Защита состоится 18 июля 2011 г., в 12<sup>00</sup> часов на заседании специализированного совета 012 ВАК, действующего в ЕГУ.  
Адрес: Ереван, ул. Абовян 52 а, корпус Факультета армянской филологии ЕГУ, аудитория # 202.

#### РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию прозы известного турецкого писателя, публициста и политического деятеля Якуба Кадри Караосманоглу (1889 - 1974); выявляются художественные и идеологические особенности так называемой «национальной литературы» (Millî Edebiyatı).

Работа состоит из Вступления, трех глав, Выводов и Списка использованных первоисточников и литературы.

Во вступлении произведен аналитический обзор публикаций турецких, западных, советских (российских) исследователей о жизни и творчестве Якуба Кадри Караосманоглу, о некоторых смежных вопросах, представлены цели и задачи диссертации и методическая основа работы, обоснованы актуальность темы и ее научная новизна.

**В Первой главе** – «Турецкая литература конца 19-го и первой четверти 20-го века и ранний период творчества Якуба Кадри» – проанализирована стадия формирования «национальной литературы» и литературный старт Якуба Кадри, начавшего свою деятельность при второй османской конституции (1908), одного из основателей литературного объединения «Fecr-i Atı», продолжателя традиций литературной школы «Сервет-и фюнун». В начале творческой деятельности (1908 - 1922 гг.) он находился под влиянием европейской философии и французской литературы. Его ранним литературным произведениям свойственен мистицизм, пессимизм, любовная тема трактуется как «единственное и всепоглощающее чувство в жизни человека». Впоследствии, обращаясь к проблемам национальным, Кадри

отказывается от принципа «искусство для искусства», начинает руководствоваться принципом «искусство для общества»; его литературная сущность проявляется в тесном сплетении с политической сущностью.

Во Второй главе – «Второй период литературной деятельности Якуба Кадри Караосманоглу (1920-1930-е гг.). Романы: «Съёмная квартира», «Ночь решения», «Содом и Гоморра» – рассматриваются предложенные автором идейно-политические и общественные проблемы, методы их художественного воплощения. В частности, показано, что автор в вышеуказанных романах с позиций «тюркчюлюк» изобличает религиозно-феодалные пережитки, губительную коррупцию, слепое подражание Западу, космополитизм, извращенность взаимоотношений в сектах бекташи.

Автор был в числе тех, кто стоял в самом центре движения кемалистов и считался близким соратником Мустафы Кемала Ататюрка, выступал в своих романах и рассказах, воспоминаниях и публицистике глашатаем кемализма. Необходимо также отметить, что Якуб Кадри, следуя языковедческим и литературоведческим принципам Зии Гёкалпа, начиная с 1920-х гг. максимально приближает язык своих произведений к народному разговорному, активно защищая кемалистские реформы, направленные на упрощение турецкого языка.

В Третьей главе – «Идейные и художественные особенности романов Якуба Кадри «Чужой» и «Анкара» – показано, что автор ставил перед собой художественную и политическую задачу: описать глубокую пропасть между турецкой интеллигенцией и крестьянством и представить свое видение Турции будущего.

В этих романах Якуб Кадри Караосманоглу попытался обрисовать образы «новых турков», которые должны были соответствовать идеологической модели, нацеленной на становление провозгласившего себя националистическим, но в действительности шовинистического кемалистского государства, однако эти образы, внешне преисполненные западных идей, тем не менее не перестают быть сильно регрессивными.

В заключение диссертации представлены Выводы из проделанной работы.

ARAM A. DAVTYAN

“The reflection of Kemalist ideology in Yakub Kadri Karaosmanoglu’s prose”

Dissertation for an academic degree of the candidate of philology with specialization in Foreign Literature.

The defence will take place on July 18, 2011 at 12:00 p.m. at the Session of the Literature Council 012 at the *Supreme Certification Commission* in the Yerevan State University. (address: Erevan 26, Abovyan 52A, Faculty of Armenian Philology, 202 lecture-room)

SUMMARY

The dissertation is dedicated to the analysis of prose of a Turkish known writer, publicist and politician Yakub Kadri Karaosmanoglu (1889-1974), who reveals the artistic and ideological characteristics of so-called “national literature”.

The paper consists of an introduction, three parts, conclusion, sources and list of literature used.

The introduction introduces Yakub Kadri Karaosmanoglu’s life and work, as well as examining theory of Turkish, western, soviet (Russian) and Armenian researchers’ publications about adjacent issues, the aim and problems of the dissertation, the methodological basis of the paper, the modernity and scientific novelty of the assigned topic.

**First part**– “Turkish literature during the end of 19<sup>th</sup> century and the first quarter of the 20<sup>th</sup> century and Yakub Kadri’s early stage of creative work”, the period of formation of the Turkish national literature and the beginning of Yakub Kadri’s literary activity were analyzed, who worked in the period of the second Ottoman Constitution (1908), became one of the founders of “Fecr-i Atiz” literary union, and one of the continuers of “Servet-i Fünun” (“The Wealth of Knowledge”) school’s literary traditions. During the first stage of his creative work (1908-1922) he was influenced by European philosophy and French literature. Mysticism and pessimism were typical to his early stage of creative work; the subject of love was interpreted as “the only and devastating feeling in the life of a person”. In the future Kadri getting more interested in national issues, rejected the “art for art” principle, and began to be led by the “art for society” principle, and his literary identity expresses closely interwoven with the political identity.

**Second part-** “Yakub Kadri Karaosmanoglu’s second stage of creative work (1920-1930): “Manor for Rent”, “The Night of the Verdict”, “Sodom and Gomorra” novels- In this part ideological, political, social issues raised by the author as well as the methods of their artistic reflection were studied. The study attracts particular attention to the author’s criticism made from Turkchuluk position of religious-feudal remains, corrosive corruption, blind imitation of the West, cosmopolitanism, distortion of relations in the Bektashi sects in the above mentioned novels.

Yakub Kadri was one of the activists of Kemalist movement, and was the ally of Mustafa Kemal Atatürk, who in his novels and stories, memoirs and publicisms was consistently supporting kemalist movement. It also has to be mentioned, that Yakub Kadri, following Ziya Gyokalpi’s linguistic and literary critical principles, starting from 1920 brings the language of his creative works closer to the colloquial by this actively defending kemalist reforms on the simplification of the Turkish language.

Third part- “Ideological and artistic characteristics of Yakub Kadri’s “Foreigner” and “Ankara” novels”. In this part the study discusses the author’s concern of the artistic and political issue to describe the profound gap existing between a Turkish intellectual and a peasant and presents his vision of the future of Turkey.

In those novels Yakub Kadri Karaosmanoglu also tries to create the images of “new Turks”, who would correspond to the proclaimed “nationalistic” ones, but, in reality, more to the kemalist ideological model aimed at creating a chauvinistic state. Although, the heroes of his novels seemed to be westernized by their outward appearance, they always continued to stay severely regressive.

The conclusions are presented in the final part of the study.

